ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մենք չգիտենք, թէ ինչպէս լուսացաւ այն մայիսեան առաւօտը... Մենք չգիտենք, թէ ինչպէս արեգակը բարձրացաւ եւ գրաւելով իր դիրքը՝ սկսեց լուսաւորել աշխարհի չորս ծագերը, որ Անդաստանի ժամանակ օրհնել էր Յովսէփ Կաթողիկոսը։ Մենք չգիտենք՝ առաւօտն այն սառնաշունչ էր, թէ մեղմ հովիկն անտառի դալարասաղարթ ծառերի եւ նորաբողբոջ ծաղիկների բոյրն էր բերում հեռուներից՝ իր տաք հոսանքով։ Մենք չգիտենք եւ չենք կարող գիտենալ, թէ անծայրածիր երկինքն այդ օրն ինչ երանգ էր ընտրել իր համար իբրեւ զգեստաւորում՝ բիլ, լազուր, լաջուարդ, թէ ամպերով ծածկուած արեգակը հորիզոնն ամբողջովին ներկել էր բոսոր՝ այն գոյնով, որ շուտով ողողելու էր դաշտն Աւարայրի։

Եւ մենք չգիտենք՝ արդեօք այս մի օրով էր սկսւում եւ աւարտւում ամեն ինչ, թէ ընդվզման եւ պայքարի սկիզբն աւելի վաղ էր դրուել... Չգիտենք, թէ երբ էր տրուել մեկնարկը... Շահապիւանի ժողովում, թէ մարտակոչով Վարդանի, որ տեղեկանալով Փայտակարանում կենտրոնացած պարսկական մեծաքանակ զօրքի մասին՝ դիմեց իր զինակիցներին՝ ասելով. «Գունդ բազում հասեալ գայ, բերելով աստուածասիրացն պսակս երկնաւորս. արդ՝ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեցէք»։ Եւ կամ սկիզբը եղաւ այն, որ հաւատափոխութեան դիմաց փառքի ու պատուի խոստումներ, իսկ յետոյ նաեւ չարչարանքի ու մահուան սպառնալիքներ լսելով Պարսից արքայից՝ Վարդանը պատասխանեց. «...զօրէնս, զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութենէ իմմէ, թողուլ եւ ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ՛ հնար»։ Եւ գուցէ Հայոց յաղթանակը հէնց սա էր, որ փաստօրէն առանձին անհատի շուրթերով խօսում էր մի ամբողջ ժողովուրդ, որը պատրաստ էր դէմ կանգնելու հրին ու սրին, դիմակայելու ցանկացած վտանգի եւ անգամ մահն ընդունելու առանց երկիւղի... Իրաւամբ սա յաղթանակ էր, յաղթանակ, որովհետեւ այլեւս ոչ ոք չէր կարող պարտութեան մատնել այն բանակն ու այն ռազմիկներին, այն ժողովրդին, որ մարտից առաջ գոչելու էր. «Հաւասարեսցի մահս մեր ընդ մահու արդարոցն եւ

հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ մարտիրոսացն»։ Եւ այն պահին, երբ Թշնամին գիտակցեց, որ անկարող է իրականացնել հաւատափոխութեան իր ծրագիրը, Թերեւս նաեւ գիտակցեց, որ պարտութիւն է կրել այդ ասպարէզում։ Կամ գուցէ յաղթանակն աւելի վաղ էին կռել հայերը. գուցէ այն պահին, երբ Մաշտոցը երկնել էր տառերը, կամ երբ Լուսաւորիչն օծել էր Տրդատի գլուխը, եւ կամ երբ խայտակն Հսկան ընդվզել էր բաբելոնեան տիրակալի դէմ։ Մենք չգիտենք...

Չգիտենք նաեւ, Թէ երբ աւարտուեց Աւարայրի ճակատամարտը, օրուայ ո՞ր ժամին... Մայիսի 26-ի երեկոյեան՝ մայրամուտի պահին, Թէ այն բանից յետոյ, երբ Վարդանն ու զինակիցները հեռացան, գնացին միանալու անմահների գնդին... Եւ երբ վերանայում ու նորից ենք Թերթում մեր պատմութեան չխունացող էջերը, տեսնում ու համոզւում ենք, որ իրականում ճակատամարտը չաւարտուեց, այն պարզապէս չվերջացաւ, չեզրափակուեց մայիսի 26-ով, այլ շարունակուեց Վանում, Զէյթունում ու Սասունում, Սարդարապատում ու Ապարանում, Արցախում... Եւ շարունակւում է ամենուր ու ամեն օր, ամեն քայլափոխի, ուր մարդուն՝ Հայ Քրիստոնեային պատրաստ են խոշտանգել ու յօշոտել՝ զուտ կրօնի եւ ազգային պատկանելութեան համար։ Եւ այսօր եւս՝ ամեն պահի, մենք պէտք է գիտակցենք ու յիշենք, որ դեռ չի աւարտուել մեր Աւարայրը, որ ամեն պահի պարտաւոր ենք պատրաստ լինել պաշտպանելու մեր լեզուն ու հողը, մեր կրօնն ու Եկեղեցին, մեր ինքնութիւնը։

Այսօր փոխուել է աշխարհը, փոխուել են Թշնամու որոգայթներն ու խարդաւանքները, սակայն չենք փոխուել մենք եւ մեր նախնիների սահմանած ազգապահպանման պատուիրանները, եւ «...զօրէնս, զոր ուսայք յԱստուծոյ եւ ի հարցն մերոց, չիք ինչ հնար Թողուլ եւ ընդ երկիւղի մարդոյ փոխանակել»։ Այս է, որ պէտք է միշտ յիշենք եւ փոխանցենք սերնդեսերունդ...

Մենք չգիտենք, Թէ ինչպէս լուսացաւ այն մայիսեան առաւօտը... Մենք չգիտենք, Թէ ինչպէս արեգակը բարձրացաւ եւ գրաւելով իր դիրքը՝ սկսեց լուսաւորել աշխարհի չորս ծագերը, որ Անդաստանի ժամանակ օրհնել էր Յովսէփ Կաթողիկոսը։ Մենք չգիտենք՝ առաւօտն այն սառնաշունչ էր, Թէ մեղմ հովիկն անտառի դալարասաղարթ ծառերի եւ նորաբողբոջ ծաղիկների բոյրն էր բերում հեռուներից՝ իր տաք հոսանքով։ Չգիտենք եւ չենք կարող գիտենալ, Թէ անծայրածիր երկինքն այդ օրն ինչ երանգ էր ընտրել իր համար իբրեւ զգեստաւորում՝ բիլ, լազուր,

լաջուարդ, թէ ամպերով ծածկուած արեգակը հորիզոնն ամբողջովին ներկել էր բոսոր՝ այն գոյնով, որ շուտով ողողելու էր դաշտն Աւարայրի... Բայց մենք հաստատ գիտենք, որ ազգի միասնական ոգին մայիսեան այդ օրն արդէն տօնել էր իր յաղթանակը՝ անկոտրում կամքով բոլորին խմբելով ահեղ մարտի դաշտում... եւ այլեւս կարեւոր չէր ճակատամարտի ելքը, որովհետեւ ակնյայտ էր արդիւնքը. բռնութեամբ, դաժանութեամբ, սպանդով անհնար է հայ մարդուն հաւատափոխ անել, զրկել հայրենի արմատներից, հեռացնել նախնեաց աւանդներից։ Եւ մենք հաստատ գիտենք նաեւ, որ յաղթութեան շեփոր հնչեցնող հրեշտակներն այն օրն առաւօտեան արդէն բրաբիոն ծաղկի անթորշոմ պսակներ էին հիւսել Հայոց 1036 մարտիրոսների համար... 1036 լուսապսակ, որոնց ցոլաշող պայծառութիւնը չի խամրի երբեք։